

**ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Երևանի «Գլածոր» համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

**ԱՆՁԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Նշված հոդվածում վերլուծված են ամձի և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավաչափության հիմքերն ըստ ՀՀ փոփոխված Սահմանադրության:

**Հիմնարարեր՝ Սահմանադրություն, սահմանադրական նորմ, իրավունքի սահմանափակում, իրավաչափության հիմքեր, պետական անվտանգություն:**

Մարդու իրավունքները և ազատությունները նրա սուբյեկտիվ, անհատական իրավունքներն ու ազատություններն են: Սակայն դրանք իրականացվում են հասարակության մեջ, առավելապես կողեւության հիմունքներով, որը պահանջում է մարդկանց համագործակցություն: Այդ հաճախանքը պայմանավորում է իրավունքների և ազատությունների սահմանափակման անհուսափելիությունը:

Սակայն, խնդիրը կայանում է նրանում, թե ինչ հիմունքներով, որքան ժամանակով և ինչ սահմաններում պետությունը պետք է իրականացնի այդ<sup>1</sup>:

Ինչպես իրավացիորեն նշում է Գ.Գ. Հարությունյանը, «միջազգային սահմանադրական պրակտիկան, ենելով նշված չափանիշից, սահմանելով իրավունքների սահմանափակման հետևյալ սկզբունքները (այսպես կոչված՝ «ոսկյա կանոնները»), հավաստում է, որ իրավունքի սահմանափակումը պետք է.

- իրականացվի օրենքի հիման վրա,
- պահպանվի համաշափության սկզբունքը,
- չաղափառվի իրավունքի էությունը<sup>2</sup>:

Դա նշանակում է, որ սահմանափակումները կարող են կատարվել միայն օրենքով, հանուն Սահմանադրությամբ նախատեսված և ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ իրավաչափ նպատակի, ինչպես նաև իրավունքը սահմանափակող օրենքը պետք է վերաբերի ընդհանուրին և ոչ թե կոնկրետ դեպքի: Ոչ մի դեպքում չի կարող աղճատվել իրավունքի էությունը:

ՀՀ Սահմանադրությամբ ուղղակի նշվում են սահմանափակման ենթակա իրավունքներն ու ազատությունները:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ «Արտակարգ կամ ուղմական դրության ժամանակական մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակումը պետությունը կարող է սահմանափակել իրավունքը, եթե սահմանափա-

իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ուղմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Բացի դրանից՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության՝ միջազգային պարտավորություններով ստանձնած սահմանները և ծավալները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է նաև, որ մարդու և քաղաքացու առանձին իրավունքների և սահմանափակման հետևանքով իրավունքը չպետք է զրկվի իր բովանդակությունից, չպետք է վտանգվի իրավունքի գոյությունը, աղափառվի դրա էությունը:

Զափազանց կարևոր է նաև, թե ինչպես են նշված չափանիշը և դրա կիրառումն ապահովող սկզբունքներն ընկալվում, մեկնարանվում և գործադրություն սահմանադրական արդարադատության պրակտիկայում<sup>3</sup>:

Ըստ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայի՝ պետությունը կարող է սահմանափակել իրավունքը, եթե սահմանափա-

կումն արդարացված է այլ իրավունքների կամ որևէ այլ սահմանադրական արժեքի պաշտպանությամբ, կամ սահմանադրական նպատակով, եթե պաշտպանությունը կամ նպատակի ձեռքբերումը չի կարող իրականացվել որևէ այլ միջոցով՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից:

Սահմանադրական լուծումների մակարդակում սահմանափակման ենթակա իրավունքների համակարգն ունի հետևյալ կառուցվածքը.

ա) իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով, առանց որևէ այլ պայմանի: Այս դեպքում օրենսդիրն ունի հայեցողության լայն շրջանակ,

բ) իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով միայն որոշակի պայմաններով, որոշակի նպատակներով կամ որոշակի միջոցներով,

գ) իրավունքներ, որոնց սահմանափակումը չի կարող կատարվել օրենքով: Հաջուկի առնելով այս իրավունքների իրականացման և երրորդ անձանց իրավունքների միջև բախման վտանգը՝ այս իրավունքները, այնուամենայնիվ, բացարձակ չեն և կարող են սահմանափակվել: Զանի որ այս իրավունքները չեն կարող սահմանափակվել օրենքով, դրանց իրականացման սահմանափակումներն ամրագրվում են սահմանադրական մակարդակով,

դ) մարդկային արժանապատվության պաշտպանությունը և մի շարք իրավունքներ դուրս են սահմանափակումների տարրերակված համակարգից, քանի որ այդ հիմնարար իրավունքները ոչ մի սահմանափակման ենթակա չեն: Չնայած նրան, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավունքի սահմանափակման պայմանները սահմանվում են միայն տվյալ իրավունքի կապակցությամբ, Սահմանադրության գծովում են բոլոր իրավունքների սահմանափակման արտաքին սահմանները: Այն է՝ ազատությունների՝ օրենքով սահմանված կարգով, ժամանակավոր սահմանափակման հնարավորություն, որը կարող է պայմանավորված լինել ուղմական կամ արտակարգ դրության և այլ արտակարգ վիճակների առկայությամբ (հոդվ. 7): Դրա հետ մեկտեղ, սահմանափակման ենթակա չեն Սահմանադրության մի շարք հոդվածներում ամրագրված իրավունքներն ու ազատությունները: Դրանք են կյանքի իրավունքը (հոդվ. 24), մարդու արժանապատվությունը (հոդվ. 23), ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը (հոդվ. 25), խոշտանգման, աննարդկային կամ նվաստացնող վերաբերունքի կամ պատժի արգելքը (հոդվ. 26), օրենքի առջև ընդհանուր հավասարությունը (հոդվ. 28), խտրականության արգելքը (հոդվ. 29), կանաց

և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդվ. 30), ամուսնանալու ազատությունը (հոդվ. 35), ծնողների իրավունքները և պարտականությունները (հոդվ. 36), երեխայի իրավունքները (հոդվ. 37), կրթության իրավունքը (հոդվ. 38-ի 1-ին մաս), մտքի, խղճի և կրոնի ազատությունը (հոդվ. 41-ի 1-ին կետ), քաղաքացիությունը (հոդվ. 47-ի 1-ին կետ) մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը (հոդվ. 52) արտաքսման կամ հանձնման արգելքը (հոդվ. 55-ի 2-րդ կետ), ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը (հոդվ. 56), դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմններ դիմելու իրավունքը (հոդվ. 61), արդար դատաքննության իրավունքը (հոդվ. 63), իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդվ. 64), ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը (հոդվ. 65), անմեղության կանխավարկածը (հոդվ. 66), մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը (հոդվ. 67), կրկին դատվելու իրավունքը (հոդվ. 68), դատապարտվածի բողոքարկման իրավունքը (հոդվ. 69), ներման խնդրանքի իրավունքը (հոդվ. 70), մեղքի սկզբունքը և պատժի համաշափության իրավունքը (հոդվ. 71): Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը, օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը (հոդվ. 73), հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ, հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը (հոդվ. 75), հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ուղղմական դրության ժամանակ (հոդվ. 76), հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը (հոդվ. 77):

Վերոնշված իրավունքներն ու ազատությունները կրում են բացարձակ, անբաժան և, ըստ էության, բնական ու օտարելի բնույթ, հետևարար որևէ սահմանափակման ենթակա չեն, այդ թվում՝ արտակարգ կամ ուղղմական դրության ժամանակ:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները կարող են իրականացվել հետևյալ եղանակներով՝

ա) արգելքներ, որոնք կարող են լինել հարաբերական (իրավունքի կամ ազատության իրականացման որոշակի տարրերակի արգելում, այսինքն՝ վարքագծի սահմանների որոշում) և բացարձակ (իրավունքի կամ ազատության ամբողջ ծավալի իրականացման արգելում, բացարձակ արգելք):

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թ) կասեցում՝ մարդու իրավունքների և ազատությունների գործողության ժամանակավոր դադար,

զ) իրավասու պետական մարմինների ներխուժում (ակտիվ գործողությունների միջոցով) մարդու իրավունքների և ազատությունների ոլորտ,

դ) պարտականություն,

ե) պատասխանատվություն:<sup>4</sup>

ՀՀ Սահմանադրության մեջ իրավունքների և ազատությունների սահմանափակումների եղանակները, մեր կարծիքով, հետևյալներն են՝

1) նշվում են իրենց գործողությունը բոլոր իրավունքների ու ազատությունների վրա տարածող սահմանափակումների ընդհանուր պայմանները: Այս եղանակին կարելի է վերագրել՝

ա) անձի արժանապատվությունը հարգելը,

թ) սահմանափակումները բացառապես որոշակի նպատակների հասնելու համար սահմանելը,

զ) պետք է պահանջվի սահմանափակումների չափը՝ սահմանափակումները կարող են սահմանվել միայն այն չափով, որով դա անհրաժեշտ է սահմանափակումներով հետապնդվող նպատակին հասնելու համար,

դ) սահմանափակումները պետք է ամրագրվեն միայն օրենքով,

ե) սահմանափակումների հավասարությունը կախված չէ որոշակի հատկանիշներից,

զ) պետք է ապահովվի օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին:

2) Նշվում են որևէ կոնկրետ իրավունքի սահմանափակման հիմքերը (բովանդակային չափանիշները) առանց սահմանափակման եղանակի և ընթացակարգի կոնկրետացման:

3) Նշվում է որևէ իրավունքի սահմանափակմանը հավանություն տված սուրյեկտը և սահմանափակման եղանակները:

4) Ամրագրվում է իրավունքների սահմանափակման եղանակը և հղումը սահմանափակման հիմքերը սահմանող օրենքին:

5) Կարող է կիրառվել համակցված տարրերակ, որը կայանում է այն բանում, որ նշվում են սահմանափակման հիմքը, եղանակը, կարգը:

6) Բուն իրավունքի (ազատության) ձևակերպման մեջ կարող են ներկա լինել որոշ սահմանափակումներ (իրավունքին զուգակցող), որոնք ավանդաբար դիտարկվում են որպես տվյալ իրավունքին ներհասուկ, որպես իրավունքի իրականացման անօտարելի տարր («քնատուր սահմանափակումներ»):

Հասարակության գարգացումն անխուսափելիորեն ծնում է իրադրություններ, որոնք պահանջում են պետությունից իրաժարվել, նահանջել իր ստանձնած պարտավորություններից, այսինքն՝ սահմանափակել մարդու իրավունքները: Խնդիրը, սակայն, հանգում է նրան, թե ինչ հիմքերով, ինչ ժամկետով և ինչ շրջանակներում կարելի է և պետք է դա արվի: Այս ոլորտում կամայականությունը և չարաշահումներն անթույլատրելի են: Որպեսզի պետությունը չփափի կամայականության մարդու իրավունքների սահմանափակման հարցում, Սահմանադրությունն ամրագրել է որոշակի իրավական չափանիշներ:

1) մարդու իրավունքներն ու ազատությունները բաժանված են սահմանափակվող և չսահմանափակվող իրավունքների ու ազատությունների: Այսինքն՝ կան իրավունքներ և ազատություններ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որևէ օրենսդրական սահմանափակման՝ ոչ մի դեպքում: Այդպիսիք են Սահմանադրության 76-րդ հոդվածում թվարկված իրավունքները և ազատությունները:

2) Սահմանափակման ենթակա իրավունքների համար Սահմանադրությունը նախատեսում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման երկու եղանակ,

ա) Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակվող իրավունքներ,

թ) օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվող իրավունքներ:

3) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքը: Գիրք առաջին: Դասագիրք բուհերի համար: Երևան, 2016, էջ 241:

<sup>2</sup> Հարությունյան Գ.ազիկ, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները. Երևան, 2005, էջ 188:

<sup>3</sup> Սահմանասի տե՛ս Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016: Նաև՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Երևան, 2006:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանությունները: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Երևան, 2010, էջ 509:

Լիլիտ Սարգսյան  
соискатель юридического факультета  
Ереванского университета “Гладзор”

## РЕЗЮМЕ

### *Основы правомерности ограничения прав и свобод личности*

В настоящей статье подробно анализируются основы правомочия ограничения прав и свобод человека и гражданина, согласно измененной Конституции Республики Армения.

**Ключевые слова:** Конституция, конституционная норма, ограничения прав, основы правомерности, государственная безопасность, общественная мораль.

Lilit Sargsyan  
competitor of the Faculty of Law  
Yerevan University “Gladzor”

## SUMMARY

### *Bases of modern constitutional law and the competences for freedom restriction*

This article analysis in details the bases for the competence for human and citizen rights and freedom restriction, in accordance with amended Constitution of the Republic of Armenia.

**Keywords:** Constitution, constitutional norm, rights restriction, bases for competence, state security, public morals.